ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1956 Общественные науки

Գ. Ստեփանյան

ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆՅԱՆ

(Մահվան 80-ամյակի առթիվ)

Նահապետ Ռուսինյանը 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ բուրժուական առաջավոր մտքի խոշոր դեմքերից է, ականավոր հասարակական գործիչ, հրապարակախոս, արևմտահայերի Ազգային սահմանադրության ստեղծողներից։ Նա եղել է Ազգային ժողովի համարձակ ու խիզախ դեպուտատներից մեկը։

Ռուսինյանը խոշոր դեր է կատարել աշխարհաբար լեզվի ձևավորման ու զարգացման գործում, Նա ստեղծել է վարչական, տնտեսական ու քաղաքական բազմաթիվ բառեր, որոնցից մի մասը այժմ էլ գործածական են հայերենում։

Ռուսինյանն իր ուրույն տեղն ունի 19-րդ դարի հայ բժշկության պատմության մեջ։ Նա թողել է ֆրանսերեն լեզվով գրված բժշկական մի աշխատություն, որը ուշագրավ երևույթ է համարվել իր ժամանակաշրջանում և տպագրվել է Սորբոնի համալսարանի ծախսով։

Նահապետ Ռուսինյանը եղել է նաև բանաստեղծ։ Թողել է մի քանի ընտիր էջեր, որոնք այժմ էլ չեն կորցրել իրենց թարմությունը և գրավում են սովետական ընթերցողի ուշադրությունը, ինչպես «Կիլիկիա» հայտնի երգի տեքստը։

Ռուսինյանի գաղափարների առաջադիմական և սկզբունքային լինելն է վկայում այն համառ ու կատաղի պայքարը, որ Կ. Պոլսի պահպանողական շրջանները մղել են նրա դեմ ամբողջ քառորդ դար։

Ռուսինյանի սխալը մնաց այն, որ գիտակցելով հանդերձ իր ժամանակաշրջանի հետամնաց լինելը, նա այդ կյանքի դեմ դուրս եկավ այնպիսի համարձակ ու հախուռն ռեֆորմներով ու առաջարկներով, որոնց կիրառումը անհնար էր պետականությունից զուրկ, կիսաճորտական վիճակում ապրող մի ժողովրդի համար և միաժամանակ չէր բխում սոցիալ-տնտեսական կյանքի օրգանական զարգացումից, պայմանավորված չէր հասարակական մտքի տվյալ էտապով։

Նահապետ Ռուսինյանը ծնվել է 1819 թվականի սեպտեմբերի 23-ին Կեսարիայի շրջանի Էֆքերե գյուղում։ Նրա տոհմական ազգանունը եղել է Պավղատյան, ինքը այն փոխել է Ֆրանսիայում սովորելու տարիներին։ Հայրը եղել է որմնանկարիչ, երիտասարդական տարիները անցկացրել է Կ. Պոլսում, զբաղվել պալատական շենքերի պատերի նկարազարդումով, ապա անցել է Եվրոպա, նվիրվել վաճառականության, վերադարձել է Կեսարիա ու այնտեղ ամուսնացել։ Այստեղ էլ ծնվել է Նահապետը, որը նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում իր հոր բաց արած տարրական վարժարանում։

1829 թվականին Պավղատյան ընտանիքը տեղափոխվում է Պոլիս։ Նահա-

պետը սովորում է Սկյուտարի դպրոցում, հմտանում դրաբարի և մասամբ ֆրանսերենի մեջ։

Հոր մահից հետո ընտանիքի ամբողջ հոգսը իր վրա ընկնելով հանդերձ՝ Ռուսինյանը ցանկանում է շարունակել իր ուսումը և Պալյան ու Սերվերյան ամիրաների նյութական աջակցությամբ 1840 թվականին գնում է Փարիզ։ Այնտեղ նա արձանագրվում է նախ Նահապետ Ռուբինյան, իսկ այդ էլ դարձնում է Ռուսինյան։ Փարիզում 1840—1844 թթ. սովորում է Սենթ Բարբի կոլեջում, որն ավարտելով 1844 թ., ընդունվում է Փարիզի բժշկական համալսարանը և հինգ տարի հետևում է համալսարանի դասընթացին։ Միաժամանակ նա մեծ եռանդով ծանոթանում է ֆրանսիական գրականությանը, տարվում հատկապես Հյուգոյի, Լամարտինի, Շատոբրիանի ստեղծագործություններով։

Վրա է հասնում 1848 թվականի ֆրանսիական ռևոլյուցիայի փոթորկոտ շրջանը։ Ամեն կողմ տարածվում են սահմանադրական գաղափարները, որոնք մեծագույն ոգևորություն են պատճառում երիտասարդությանը, այդ թվում և հայ ուսանողությանը։

Փարիզում սովորող հայ ուսանողներից շատ շատերը, նաև Նահապետ Ռուսինյանը, տարվում են ռևոլյուցիոն գաղափարներով, խանդավառվում ազգային-աղատագրական պայքարով։

Այսպիսի քաղաքական-հասարակական պայմաններում է, որ Ռուսինյանը ավարտում է համալսարանը 1849 թվականին, երեսուն տարեկան հասակում և փայլուն կերպով պաշտպանում է դիսերտացիա, ստանում բժշկական գիտությունների դոկտորի աստիճան։ Նրա դիսերտացիայի նյութն է եղել «Մի բժշկական սկզբունքի ընտրությունը», որտեղ պաշտպանել է ու գիտականորեն հիմնավորել այն թեզը, թե ոչ թե պետք է բուժել բուն հիվանդության տեղը, այլ գտնել այն օրգանիզմը, որին ենթակա է հիվանդ մասը և բուժել այդ կենտրոնը։

Ռուսինյանի թեզը արժանանում է ջերմ ընդունելության։ Սորբոնի համալսարանը իր ծախսով հրատարակում է այն ֆրանսերեն լեզվով։

Ստանալով բժշկական գիտության դոկտորի վկայականը, Ռուսինյանը Պոլիս չի վերադառնում։ Փարիզի ուսանողական և մտավորական այն միջավայրը, որի մեջ գտնվում էր նա, ֆրանսիական ռևոլյուցիայի ուժեղ ազդեցության տակ էր և կազմում էր ծրագրեր՝ հայ ժողովրդի ապագայի մասին։ Այնտեղ էին հետագայում անուն հանած բազմաթիվ մտավորականներ, Խաչատուր Պարտիզպանյանը, Խաչատուր Միսաքյանը, Կարապետ Ութուջյանը, Ամբրոսիոս ու Խորեն Դալֆայան եղբայրները և ուրիշները։

Ահա այս խումբն է, որ 1849 թվականի ապրիլ ամսին Փարիզում կազմում է Այրարատյան ընկերությունը, որի նպատակն էր օգնել հայ ժողովրդի կուլտուր-լուսավորական գործին։

Նույն այս ուսանողական միջավայրն է, որ հարկադրում է Ռուսինյանին լքել բժշկական գիտությունը և զբաղվել հասարակական աշխատանքով, կրթական-լուսավորական գործերով։

Սուլթանական բռնապետական կարգերի պատճառով՝ ուսանողական այդ խումբը նպատակ ուներ մի առ ժամանակ աշխատել երկրից դուրս, գրականության միջոցով թափանցել Պոլիս, նախապատրաստել մտքեր ու ապա վերադառնալով հայրենիք՝ կենսագործել կազմված ծրագրերը։

Ռոմանտիկ երաղներով տարված այդ երիտասարդներից մի քանիսի հեռանկարն էր Կիլիկյան հայ պետականության վերականգնումը և անկախությունը՝ որևէ օտար երկրի հովանավորությամբ։ Դրանով պետք է բացատրել հետագայում Ծերենցի և ուրիշների Կիլիկիա մեկնելը, հայ բուրժուազիայի ակտիվ գործունեությունը Զեյթունի ապստամբության հրահրման խնդրում, դրանով պետք է բացատրել նույնիսկ Նահապետ Ռուսինյանի պատանեկան խանդավառությունը, իր ազգանունը Ռուբինյան դարձնելու փաստը։

1849 թ. Ռուսինյանը ամուսնանում է մի ֆրանսուհու հետ և մոր թախանձանքով հարկադրված է լինում վերադառնալ Պոլիս։

Ռուսինյանը Պոլիս է վերադառնում մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ պոլսահայ բուրժուազիան ապրում էր իր մտավոր և քաղաքական վերելքի բուռն շրջանը, երբ ֆեոդալական, ամիրայական դասի դեմ մղվող պայքարը մտել էր իր նոր փուլի մեջ և ապահովել էր պահպանողականության դեմ պրոգրեսիվ տարրերի հաղթանակը։ Պատրիարքի միանձնյա իշխանությունը աստիճանաբար տեղի էր տվել էսնաֆ դասի և բուրժուական խավերի ճնշմանը։ Նախապատրաստվում էր ազգային իշխանությունների գործը ընտրովի մարմիններին հանձնելու կարևոր քայլը, որի ամենաեռանդուն մասնակիցներից մեկն է դառնում Ն. Ռուսինյանը։

Սկսած 1852—53 թվականներից, մինչև Ազգային սահմանադրության հոչակումը, 1860 թվականը և այդ սահմանադրության կենսագործումը, 1863 թվականը, Նահապետ Ռուսինյանը մասնակցում է Ազգային սահմանադրությունը մշակող բոլոր հանձնաժողովներին և հիմնական աշխատանքը կատարում է ինքը։ Նրա գրչին են պատկանում և՛ այդ սահմանադրության նախագիծը, որն ընդունվեց 1860 թվականին և՛ նրա բոլոր հետագա խմբագրումները։

Ռուսինյանը այնուհետև մինչև իր կյանքի վերջը նվիրվում է սահմանադրական գաղափարների կենսագործմանը, զուգահեռ զբաղվելով գրական, կրթական աշխատանքներով։

Նրա՝ Կ. Պոլիս գալու հենց հաջորդ տարվանից բորբոքվում է լեզվապայքարը։ 1851 թվականին լույս է տեսնում Գր. Օտյանի «Առաջարկություն աշխարհաբարի վերա» բրոշյուրը, որը դնում էր լեզվապայքարի առաջին հիմնաքարը՝ հոդուտ աշխարհաբարի։ Ընդամենը երկու տարի հետո՝ 1853 թվականին, Ռուսինյանը հրատարակում է իր հայտնի «Ուղղախոսությունը», որը ժամանակին մեծ աղմուկ է հարուցում Կ. Պոլսի պահպանողական շրջաններում։ Պատրիարքարանը միջամտում է և արգելում հայոց լեզվի մեջ համարձակ փոփոխություններ առաջադրող, բայց միաժամանակ աշխարհաբարի գերակշռությունը հիմնավորող այդ աշխատությունը։

Ամենևին չհուսահատվելով պահպանողական տարրերի հալածանքից ու ճնշումից, Ռուսինյանը 1855 թվականին հրատարակում է իր «Տարեցույցը», որի մեջ է՛լ ավելի համարձակ ներխուժում են ոչ միայն 1848 թվականի ֆրանսիական ռևոլյուցիայի գաղափարները, այլև 1789 թվականի ռևոլյուցիայի մի շարք ռեֆորմները մեխանիկորեն տեղափոխվում են հայ իրականության մեջ։

Այդ տարեցույցը նոր երևույթ էր հայ իրականության համար, հիմնովին տարբեր էր սովորական տարեցույցներից։ Բացի օրացուցային պարտադիր նյութերից՝ տոմարական տվյալներ, կրոնական տոների օրերի նշումն և այլն,

պարունակում էր երկրագործական, տնտեսական, առողջապահական հետաքրքիր գիտելիքներ, նախորդ տարում միջազգային ասպարեզում պատահած դեպքերը։ «Ազգային» վերնագրված բաժնում Ռուսինյանը խոսում էր ուսումնա-դաստիարակչական խնդիրների մասին։

Ռուսինյանը, հետևելով ֆրանսիական ռևոլյուցիայի շրջանի ռեֆորմներին, հատկապես 1793 թվականի նոյեմբերի 24-ին Փարիզում ընդունված «Հանրապետական տարեցույց»-ի օրինակին, հայերեն ամսանուններին տալիս էր քմահաճ անուններ, իսկ տարին առաջարկում էր սկսել ոչ թե հունվարի 1-ից, այլ մարտի 21-ից, այսինքն գիշերահավասարից։

1860 թվականին Լիբանանում քրիստոնյաների և մահմեդականների միջև տեղի են ունենում ընդհարումներ։ Արտաքին գործերի մինիստր Ֆուատ փաշան մի քանի բժիշկների ուղեկցությամբ մեկնում է դեպքի վայրը։ Այդ բժիշկների մեջ է լինում Նահապետ Ռուսինյանը։ Նա իր պաշտոնական պարտականությունները կատարելուց հետո թույլտվություն է ստանում անցնելու Կիլիկիա։ Այնտեղ Ռուսինյանը մոտիկից ծանոթանում է Կիլիկիայի քաղաքներին ու նավահանգիստներին, այն բոլոր վայրերին, որոնք կապված էին հայ բուրժուազիայի որոշ թևի երազների իրականացման հետ։ Ռուսինյանը շրջագայում է մի շարք վայրերում, լինում է Կիպրոսում, ապա վերադառնալով Պոլիս՝ գրում է իր հայտնի «Կիլիկիա» բանաստեղծությունը, հատկապես կիլիկյան այդ թարմ տպավորությունների տակ։

1862 թվականին կազմակերպվում է «Հայ երաժշտական ընկերությունը», որին մասնակցում են սահմանադրության հիմնադիրներից մի քանիսը, Գր. Աղաթոնը, Գր. Օտյանը, նաև Ռուսինյանը։ Այդ ընկերության նպատակն էր հրատարակել մասսայական երգեր, թատերական կտորներ, պարերգեր և այլն։ Այլ խոսքով երաժշտության ճաշակը զարգացնել ժողովրդի մեջ։

Ռուսինյանը ակտիվորեն մասնակցում է նաև հայ թատրոնի կազմակերպման գործին, աշխատում է ստեղծել թատերական տերմինոլոգիա, բեմական լեզու, նա է ոճաբանում, ուղղում բեմադրվող պիեսների լեզուն, ֆրանսերենից թարգմանում է Վ. Հյուգոյի «Ռյուի Բլազ» պիեսը։

1872 թվականին Ռուսինյանը նորից լույս է ընծայում իր այնքան մեծ աղմուկ հանած «Տարեցույցը» նոր թվականին հարմարեցված նյութերով, հանդիպելով պահպանողական բանակի անհամեմատ ավելի թույլ դիմադրությանը, քան 1855 թվականին։

1876 թվականին Ռուսինյանը ապրում է տնտեսական ամենածանր պայմաններում, նրա ընկերներից բժիշկ Սերվիչենի միջնորդությամբ հրավիրվում է պաշտոնի պետական զինվորական վարժարանում, որտեղ դասավանդում է փիլիսոփայություն և բժշկության բարոյականություն։

Վարժարանի տեսչի առաջարկով Ռուսինյանը ձեռնարկում է փիլիսոփայության մի դասագրքի պատրաստման գործին։ Երկու ամիս շարունակ աշխատում է այդ ձեռնարկի վրա։ Ծանր ու լարված այդ աշխատանքը, Ազգային ժողովի նիստերում նրա կրած հոգեկան ցնցումները, գաղափարական ու անձնական հակառակորդների ամենօրյա հալածանքը, տնտեսական ծայրահեղ վատ պայմանները արագացնում են Ռուսինյանի ֆիզիկական ուժերի ջլատումը։

Հաղիվ ավարտած փիլիսոփայության ձեռնարկը, 1876 թ. դեկտեմբերի

1-ին, 57 տարեկան հասակում ուղեղի կաթվածից մեռնում է Նահապետ Ռուսինյանը։

Մահից երեք տարի հետո՝ 1879 թվականին Կ. Պոլսում լույս է տեսնում Ռուսինյանի փիլիսոփայության դասագիրքը հետևյալ վերնագրով՝ «Դասագիրք փիլիսոփայության, հետևողությամբ լավագույն հեղինակաց ընտրողական դպրոցի։ Գրեց Նահապետ Ռուսինյան, դասատու փիլիսոփայության և բժշկական բարոյագիտության ի կայսերական բժշկական ուսումնարանին Կ. Պոլսոյ։ 1879»։

Ռուսինյանի գեղարվեստական երկերը, Ազգային ժողովում արտասանած ճառերը մինչև այժմ էլ մնում են պարբերական մամուլի էջերում և Ազգային ժողովի սղագրությունները պարունակող հատորներում։

* * *

Ռուսինյանի հասարակական գործունեությունը սերտորեն առնչվում է այն պայքարի հետ, որ մղում էին 19-րդ դարի 50-ական թվականներին հայ բուրժուազիան և Կ. Պոլսի դեմոկրատական խավերը ամիրայական, կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ, հանուն պատրիարքարանի միահեծան իշխանության տապալման, հանուն ազգային իշխանությունների դեմոկրատականացման, ընտրական սկզբունքներով ղեկավարվող ազգային մարմինների ստեղծման։

19-րդ դարի առաջին կեսում նկատելի տեղաշարժեր էին կատարվել օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական կյանքում։

Տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններից մեկն այն էր, որ Թուրքիան ուժեղ կերպով ընկել էր եվրոպական կապիտալի ազդեցության տակ։ Թուրքական արքունիքի ֆինանսավորումը հայ ամիրաների ձեռքից անցել էր եվրոպական բանկային ընկերություններին, որոնք իրենց կառավարությունների միջոցով ակտիվ կերպով միջամտում էին նաև երկրի քաղաքական կյանքին։

Մյուս կողմից, սկսած 19-րդ դարի առաջին տասնամյակներից, ազգային-ազատագրական լայն շարժում էր ծավալվել Բալկաններում, որտեղ իրենց ազատությունն էին ձեռք բերել հույները, սերբերը և այլ ժողովուրդներ։

Թուրքիայի փոքրամասնությունների ազգային ազատագրական զարթոնքը համընկնում էր թուրք աշխատավորության պայքարին, որը օրեցօր սպառնալից ուժ էր դառնում գավառում։

Ահա այս պայմաններում է, որ թուրքական կառավարությունը հրատարակում է մի շարք ռեֆորմներ, որոնք եթե մի կողմից ամրապնդում էին ֆեոդալական տնտեսաձևի հիմքերը, մյուս կողմից աշխուժացնում էին քաղաքային բուրժուազիային, այդ թվում հայ բուրժուազիային, որը ստեղծելով իր մամուլը, թատրոնը, կրթական ու հասարակական ընկերությունները, զգալի աշխատանք է կատարում ազգահավաքման, մասսաների ազգային գիտակցության բարձրացման ուղղությամբ։ Այս բոլորը չէին վրիպում սուլթանական կառավարության ուշադրությունից, որը, մասամբ տեղի տալով վեր ելնող հայ բուրժուազիայի պահանջներին, մասամբ էլ ազատության ելույթներով նրան որորելու համար, փորձում էր որոշ սահմանափակումներ մտցնել պատրիարքարանի կրոնական միահեծան իշխանության մեջ, գեթ հայ ժողովրդի ներքին գործերի ղեկավարությունը հանձնել ընտրովի մի մարմնի։

Հայ բուրժուազիայի քաղաքական-լուսավորական այդ պայքարը ղեկավարողների մեջ էր՝ Գր. Օտյանի, Սերվիչենի և Աղաթոնի հետ միասին, Նահապետ Ռուսինյանը։ Ավելին, նա ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել ազգային սահմանադրության ստեղծմանը, սկսած 1850-ական թվականների կեսերից։

1857 թվականին կառավարության կողմից շնորհվում է մի կանոնադրություն, որը ազգային ներքին գործերը ղեկավարելու լիազորությունից այն կողմը չէր անցնում։ Չնայած դրան՝ հազիվ սկսվում է գործադրվել այն, երբ պարտված տիրապետող դասակարգը, որի ձեռքից փաստորեն խլվել էր իշխանությունը, սկսում է իր կատաղի պայքարը, այսպես կոչված, լուսավորյալների, այսինքն սահմանադրության կողմնակիցների դեմ։ Ամիրաներին ու ռեակցիոն հոգևորականությանը հաջողվում է կառավարության միջոցով արգելակել նոր կանոնադրության կենսագործումը, առաջարկվում է ընտրել նոր հանձնաժողով, որպեսզի պատրաստի նոր կանոնադրությունը։ 14 հոգուց բաղկացած այդ հանձնաժողովում հիմնական աշխատանքը կատարում էր Ն. Ռուսինյանը։ Նա է գրում նոր կանոնադրության ամբողջ տեքստը, որը 1859 թվականին ներկայացվում է հաստատման, միաժամանակ ամիրաների ճնշման տակ էլի ձգձգվում է և վերջապես 1860 թ. մայիսի 24-ին ընդունվում է և կառավարության կողմից հաստատվում, Ռուսինյանի առաջարկով կոչվելով Ազգային սահմանադրություն։

Ազգային սահմանադրությունը հիմնականում ծառայում էր հայ բուրժուազիայի շահերին։ Հայ բուրժուազիան իր վերելքի շրջանում՝ փորձելով հանդերձ հենվել աշխատավոր մասսաների վրա, վերջիններիս աջակցությամբ ու քվեով գործի գլուխն անցնելուց հետո աստիճանաբար դրսևորեց իր հաշտվողական քաղաքականությունը ու Ազգային ժողովում էլ պայքարը աստիճանաբար ամիրայության ու ֆեոդալական դասակարգի փոխարեն ուղղվեց օրեցօր աճող դեմոկրատական տրամադրությունների ու խավերի դեմ։

Եվ առհասարակ մեծաշռինդ այդ Ազգային սահմանադրության էությունը, ոգին բուրժուական էր, իր մեջ չուներ ժողովրդական մասսաներին օգտակար դառնալու որևէ հոդված։ Այդ սահմանադրության օրենքներով գործող Ազգային ժողովը բաղկացած 140 դեպուտատներից, գերազանցապես ներկայացնում էր քաղաքային հայ բուրժուազիային և գավառական առևտրական դասի շահերը։ 140 դեպուտատներից 100-ը ներկայացնում էին Կ. Պոլսի հայությանը, որը բաղկացած էր գերազանցապես առևտրականներից, վաճառականներից, պետական ու հասարակական հիմնարկների ծառայողներից։ Պոլսում մեծ տոկոս էր կազմում նաև պանդխտությունը, սակայն ընտրությունների ժամանակ նրանք հնարավորություն չունեին իրենց շահերն արտահայտող դեպուտատներ առաջադրելու, հարկադրված էին քվեարկել իրենց անունից ճառող հայ բուրժուազիայի օգտին։ Միանգամայն այլ պատկեր էր ներկայացնում գավառի դեմքը։ Եթե Ազգային ժողովի 140 դեպուտատներից 100-ը ներկայացնում էին Թուրքիայի հայ բնակչության հազիվ 200000-ին, ապա գավառից ընտրված 40 դեպուտատները ներկայացնում էին ավելի քան 2 միլիոն հայերի։ Եվ որովհետև գավառական ընտրությունները կատարվում էին գերազանցապես գավառական ժողովների միջոցով, իսկ այդ ժողովներում նստած էին նույնպես հարուստները,

ուստի պարզ կարող է դառնալ, որ առհասարակ աշխատավոր հայ ժողովուրդը բուրժուական այդ «պառլամենտում» չուներ իր շահերի պաշտպանները։

Այս բոլորով հանդերձ, պատմական տվյալ էպոխայում պրոգրեսիվ էր հայ բուրժուազիայի ասպարեզ գալը և ազգային իշխանությունները կղերա-ֆեոդալական ամիրայական դասակարգի ձեռքից խլելը։ Այնպիսի մի երկրում, ինչպիսին էր հետամնաց ռազմաֆեոդալական Թուրքիան, հասկանալի է, որ նոր ու տարօրինակ երևույթ պետք է համարվեր հպատակ մի ժողովրդի այնպիսի մի Ազգային ժողովը, որը սահմանադրական պետությունների պետական մեխանիզմի օրինակով պարբերաբար սեսիաներ էր գումարում օսմանյան կայսրության մայրաքաղաքում, մտքերի փոխանակություն, վեճեր բայանում, ազմուկ աղաղակ բարձրացնում։

Հայերի ազգային ժողովը ուներ իր նախագահը (ատենապետը), քարտուղարը (ատենադպիրը), ուներ իր ենթակա հանձնաժողովները՝ կրոնական-քաղաքական ժողովներ, ուսումնական խորհուրդ և այլն։ Սահմանադրության հաստատման առաջին երկու տասնամյակներում Ազգային ժողովը անհամեմատ ավելի ազատ էր պետական հսկողությունից, պարբերաբար հրավիրում էր իր սեսիաները, որտեղ արտասանվում էին կրակոտ ճառեր, այս բոլորը խնամքով սղագրվում էր ու տպագրվում «Ատենագրություն Ազգային ժողովո» վերնագրով։

Նահապետ Ռուսինյանը, ինչպես ասվեց, ոչ միայն Ազգային սահմանադրության հղացման նախապատրաստման ու անցկացման ակտիվ մասնակիցն էր, այլև Ազգային ժողովի ամենաեռանդուն դեպուտատներից մեկը։ 1863 թ. սեպտեմբեր ամսին նա ընտրվում է դեպուտատ Կ. Պոլսի Մայր եկեղեցի կոչված թաղամասից։ Նույն թվականի հոկտեմբեր ամսից ընտրվում է երկրորդ ատենապետ, փոխնիփոխ ատենապետի հետ միասին վարելով Ազգային Ժողովի նիստերը։ 1870 թվականին Ռուսինյանը արդեն ընտրվում է Ազգային ժողովի ատենապետ և այդ պաշտոնում մնում է ամբողջ մեկ տարի։

Պետք է նշել, որ Ռուսինյանը իր ամբողջ դեպուտատական գործունեության ընթացքում՝ արտահայտելով հանդերձ հայ բուրժուազիայի շահերը, այդ շրջանի գրեթե միակ դեպուտատն էր, որ դուրս գալով իր գաղափարակից ընկերների սահմանափակ պահանջներից, առաջադրում էր աշխատավոր ժողովրդին հետաքրքրող մի շարք պահանջներ, որոնց քննարկման ժամանակ բռնում էր ակզբունքային ու հետևողական դիրք։ Ասենք ժողովում քննարկման ենթակա հարցերից և ոչ մեկը կապված չէր հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի հետ։ Դրանք գերազանցապես ներքին կուլտուր-կրթական, դավանաբանական հարցեր էին, կաթողիկոսական և պատրիարքական ընտրություններ, դպրոցական հարցեր, վանքապատկան կալվածների հետ կապված խնդիրներ, ամուսնական և ամուսնալուծման հետ կապված հարցեր և այլն, որոնք ծեծվում էին տարիներ և հաճախ էլ իրենց լուծումը չէին ստանում։ Ազգային ժողովի քննարկած հարցերի մեջ միակը, որը առնչվում էր քաղաքականության հետ և կապված էր դավառի հայ դյուղացիության ճակատագրի հետ, Մկրտիչ Խրիմյանի պատրիարքության օրոք կազմված, այսպես կոչված, «Գավառական հարստահարություններ» հարցն էր, որը հազիվ օրակարգի մեջ մտցված՝ հանվել էր առանց վիճարանություններ բաց անելու։ Կառավարության գաղտնի գործակալները արդոսյան աչքերով հետևում էին, որպեսզի Ազգային ժողովը

որևէ հակակառավարական քայլ չկատարի։ Այն դեպուտատը, որը փորձում էր իր ելույթում շոշափել քաղաքական որևէ խնդիր «պատվարժան ու խոհեմ» դեպուտատ էֆենդիների կողմից սաստվում էր, կարգի հրավիրվում։

Ինքը, Ռուսինյանը, այդ սահմանադրության ստեղծողներից ու նրա օրենքի պաշտպաններից մեկը, ճիշտ է բնութագրել դեպուտատների իրավասության սահմանը։ 1874 թվականի հոկտեմբերի 18-ի նիստում արտասանած իր ճառում Ռուսինյանը ասում է։

«Երեսփոխանի մը խոսելու ազատությունը անբռնաբարելի է, այո, բայց իր ձեռնհասության սահմանին մեջ և ինչպես ամեն ազատություն՝ ան ալ ունի իր սահմանը, ուրկե դուրս գեղծում է, չէ ազատություն, այլ ապերասանություն, որ եպերելի է ամենուրեմ և ծաղկելի ըստ ամենայն օրինաց աշխարհի։ Մեր բեմական ազատության սահմանը մեր ներքին գործերն են, մեր ազգային հաստատությունքը, եկեղեցի, դպրոց, վանք, և կառոտելոց ձեռնտվություն։ Ասոնց մեջ պարփակյալ է մեր խոսելու ազատությունը։ Նաև ասոնց մեջ հաստատելու է սոսկ ազգային օրենքնիս։ Կայսերական ընդհանուր օրինաց պետք է, որ չհակառակին։ Մինչև հոս է ահա մեր ձեռնհասության սահմանը։ Ուստի պարտ է մեզ խոհեմությամբ զգուշանալ, սահմաններիս ու շափերնիս ճանաչել և բարեխնամ պետության վստահությունը միշտ վայելելու համար մեր զլխեն վեր խնդիրների հանդգնությամբ չնախաձեռնել, մեկ խոսքով չշեղել սա համոզումեն, թե տերության շահերը ազգինն են և ազգինները տերությանը»։ *(«Ատենագրություն Ազգային ժողովոյ», հատ. Ը., էջ 52) (Ընդգծումները մերն են)։*

Այս բանը լավ գիտեր հայ բուրժուազիան։ Այնուամենայնիվ ինչով բացատրել, որ նա այնքան եռանդով պաշտպանում էր Ազգային սահմանադրությունը, Ազգային ժողովը, կյանքի զնով պայքարում էր այդ յուրահատուկ անպորտֆել պառլամենտի գոյության համար, այնինչ կարող էր օգոստափառ կայսեր ցանկություններն էլ կատարելու համար մի ավելի համեստ ազգային մարմինով, հանձնաժողովով ղեկավարել ազգային զուտ ներքին գործերը։

Ազգային սահմանադրության մասին գրող որոշ մարդիկ սահմանադրության հետ կապված ամբողջ շարժումը անվանել են մի տեսակ ավանտյուրիզմ, հայ բուրժուազիայի միամիտ երազների արգասիք, մի տեսակ անխոհեմ շռայլություն։ Սա միակողմանի բացատրություն է։ Հայ բուրժուազիան, ճիշտ է, եղել է երկչոտ, տատանվող, բայց այնքան միամիտ չի եղել, որքան կարծում են ոմանք։ Ազգային սահմանադրության իրավունքներով գործող Ազգային ժողովի գոյության հետ հայ բուրժուազիան երբեք էլ չի կապել միայն ներքին կրոնական ու կրթական հարցերի լուծումը։ Ազգային ժողովը իր ատենապետով, ատենադպիրով, քաղաքական ու կրոնական առանձին ժողովներով, հանձնաժողովներով ու ենթահանձնաժողովներով, քարտուղարությամբ և այլ արտաքին հանգամանքներով իրենից ներկայացնում էր եվրոպական սահմանադրական պետությունների պառլամենտի մի մոդելը, ըստ էության ապագա Հայաստանի պառլամենտը։ Եվ այդ խրտվիլակ էր այնքան ժամանակ, որքան չկար հայ պետականություն և որովհետև հայ բուրժուազիայի ամբողջ պայքարի նպատակն էր այդպիսի պետականության ապահովումը, ուստի և այդ պետական մեխանիզմի նախապատրաստումն ու մարզումն էլ ամենևին ավելորդ չէր թվում։

Ռուսինյանի մշակած սահմանադրության հիմքում ընկած էր բուրժուական պառլամենտարիզմը և ինքն էլ հանդես էր գալիս որպես սահմանադրական պետության գաղափարի ջերմ պաշտպան։

Ըստ այդ սահմանադրության՝ յուրաքանչյուր գավառ, կամ քաղաքում յուրաքանչյուր թաղամաս ինքն է տնօրինում իր գործերը և այդ բոլոր գավառներն ու թաղամասերն իրենց ընտրովի ներկայացուցիչն ունեն Ազգային ընդհանուր ժողովում, կապված են մի ընդհանուր կենտրոնի հետ, հրահանգավորվում են այդ կենտրոնից, ուղղություն ստանում այնտեղից։

Ազգային բոլոր գործերի ղեկավարման կենտրոնը հանդիսացող Ազգային ժողովը գտնվում է Կ. Պոլսում և ղեկավարվում պատրիարքի կողմից։

Հայ բուրժուազիան, որի սկզբնական շրջանի գործունեության հիմքում ընկած էր Կ. Պոլսի պատրիարքի և առհասարակ կրոնական իշխանության իրավասության սահմանափակության հարցը, Ազգային ժողովում պատրիարքին վերապահելով հանդերձ ղեկավար դեր, անշուշտ չէր ելնում հոգևորական ղեկավարությանը անձնատուր լինելու ցանկությունից։ Պատրիարքը այստեղ այնպիսի մի հեղինակություն էր, ինչպես ասենք որևէ վարչապետ պառլամենտական երկրում։ Եվ բացառված չէ ենթադրել, որ պատրիարքին վերապահվող իրավասությունն էլ վերջիվերջո նկատի էր առնվում Կիլիկիայում հիմնվելիք ապագա հայ պետության ղեկավարին։

Ռուսինյանի լոզունգն էր «Ընտրությունը նահանգին, վավերացումը կենտրոնին», այսինքն ազգային ընդհանուր ժողովի բացարձակ գերիշխանությունը բոլոր գավառական ժողովների նկատմամբ։

Ընտրական սկզբունքի հիման վրա կառուցված կենտրոնացման ու համակենտրոնացման այս ձևը, որը կիրառվում էր Ազգային ժողովում, ուներ մի առավելություն, որն անհնար է անտեսել։ Այդ՝ Թուրքիայում ապրող հայ բնակչության կապի ապահովությունն էր։ Սահմանադրությունից առաջ չկար այդպիսի մի մարմին։ Ավելի ճիշտ՝ այդ դերը կատարում էր պատրիարքարանը իր առաջնորդարաններով, որի գործունեության հիմքում ընկած էր գերազանցապես դավանական, կրոնական խնդիրների տնօրինումը։ Հայ ժողովուրդը ապրում էր մասնատված, ցրված այս կամ այն գավառում, չկար որևէ ազգային կենտրոն, որի ընդհանուր ղեկավարությամբ հայ բնակչությունը հանդես գար իր միասնական պահանջներով ու ցանկություններով։

Սահմանադրության հիման վրա հրավիրված Ազգային ժողովը մասամբ այդ բացը լրացնում էր։ Ճիշտ է, այնտեղ թույլ էր դեմոկրատական խավը, հետագայում սակայն, նույնիսկ համիդյան բռնապետության սարսափելի տարիներին, տեսնում ենք դեմոկրատական խավերի աշխուժացումը, նրանց դեմառ դեմ կանգնելը իր ռեակցիոն էությունը դրսևորած, պահպանողական լագերն անցած հայ բուրժուազիային։

Հայ բուրժուազիայի վերելքի շրջանի «դեմոկրատական» գաղափարախոսությամբ պետք է բացատրել Ն. Ռուսինյանի պառլամենտական գործունեության ժողովրդայնությունը։ Բուրժուական պատմաբանները և բանասերները, անգամ դեմոկրատ Արփ. Արփիարյանի նման մի արմատական մտածող շատ են գերագնահատել Ռուսինյանին ու նրան դուրս բերել ոչ միայն բուրժուական դեմոկրատ, այլև ռևոլյուցիոներ։ Այսպես, ըստ Արփիարյանի Ռուսինյանը «գաղափարին նվիրված հոյակապ անձնավորություն մըն է», որ Գր. Օտյանից

տարբերվում է նրանով, որ «Օտյան հառաջադիմությունը բնաշրջումով կուզեր կատարել տալ, Ռուսինյան հեղաշրջումով», իսկ Մխիթարյան գրականագետ ու բանասեր Ս. Երեմյանին Ռուսինյանը ներկայանում է «կատարյալ ռամկավարական մը», այսինքն դեմոկրատ գործիչ։

Իրականում ոչ մեկն էր, ոչ մյուսը։ Ռուսինյանի աշխարհայացքը շատ պարզ է ու որոշ։ Նա արտահայտում էր վեր ելնող բուրժուազիայի տրամադրությունները ու ձգտումները, նրա առավելությունը իր դաղափարակիցների նկատմամբ այն էր, որ նա հակառակ Գր. Օտյանին և մյուսներին, շատ ավելի երկար ժամանակ հավատարիմ մնաց իր պատանեկան տարիների խանդավառ երազներին ու ֆրանսիական ռևոլյուցիայի տրամադրություններին։ Ու հենց դրանով էլ պետք է բացատրել նրա անհաշտ գիրքը կրոնի նկատմամբ։

50—60-ական թվականներին Ազգային ժողովում Ռուսինյանը միակն էր, որ աչքի էր ընկնում իր սկզբունքայնությամբ, համարձակությամբ, անվախ ու մարտնչող ոգով։ Նրա երգիծական պորտրեն գծող Մ. Մամուրյանը, որը չի վարանել մի շարք սուր սլաքներ ուղղել Ռուսինյանի հասցեին, ծաղրելով հատկապես նրա նորամուծությունները, այնուամենայնիվ հարկադրված էր ընդունել, որ Ռուսինյանի «խոսածը խոսած, դրածը դրած, ըրածը ըրած է», «անհողդողդ սկզբունք, ադամանդի պես սիրտ, երկսայրի սուրի պես լեզու ունի»։

Չի արձանագրված որևէ փաստ, որ Ռուսինյանը իր դեպուտատական գործունեության ընթացքում առաջնորդվեր իր անձնական շահից և ակնկալություններից։

Ինչքան ռեակցիան մոլեգնում էր Ռուսինյանի շուրջը, ստեղծում անտանելի պայմաններ, դավադրություններ էր լարում նրա անձի դեմ, ինչքան պատրիարքարանը որոշում էր հրապարակային բանադրանքներով կարգի բերել ըմբոստ Ռուսինյանին, նա այնքան անողոք էր պայքարում ռեակցիոն լագերի դեմ։ Մինչդեռ նրա ընկերները Գր. Օտյանը, Սերվիչեն, Ստ. Ասլանյանը և ուրիշները երկյուղածությամբ համբուրում էին պատրիարքների ձեռքը ու փորձում էին «լեզու գտնել» նրանց հետ, Ռուսինյանը անողոք ճշմարտությունը նետելով ժողովականների երեսին և խոսքը ուղղելով այդ հոգևոր պետերին, ասում էր.

«Դուք, դուք, դուք, դո՛ւք եք հայ ժողովրդին ամեն աղետներուն պատճառը»։

Ռուսինյանը Ազգային ժողովի ամբիոնը օգտագործում էր շատ հաճախ հասարակական լայն խավերին հուզող հարցերի առաջ քաշման համար, խոսում էր այնպիսի հարցերի մասին, որոնք սերտորեն առնչվում էին աշխատավորների շահերի հետ, բայց լուծվում էին առանց նրանց մասնակցության, առանց նույնիսկ սակավաթիվ գավառական դեպուտատների կարծիքն հաշվի առնելու։ Ռուսինյանը իր դեպուտատական ճառերից մեկում վրդովմունքով հայտարարում էր.

«Միտ բերեք մեյ մը ժողովուրդը, այն մեր համարյուն, սիրելի ու խեղճ բազմությունը, որ իր հույսը ձեր վրա և իր ապագան ձեր ձեռաց մեջ ավանդել է։ Երեսփոխանին քվեթուղթը ժողովուրդին ճակատագիրն է, գթացեք անոր անմեղ տգիտությանն ու թշվառությանը, որո մեղքը մեր վրա կը դրվի»։

Ն. Ռուսինյանը կրոնական եկեղեցական «ձայն բազմաց, ձայն Աստուծո»

լոզունգը ցանկանում էր օգտագործել «Բազմաց ձայնը», այսինքն ժողովրդական լայն խավերի կարծիքը հաշվի առնելու համար։

Բուրժուական հումանիստական այս շատ սահմանափակ պահանջներն էլ հանդիպում էին Ազգային ժողովի դիմադրությանը։ Ռուսինյանին երբեք էլ չի հաջողվել որևէ հարց լուծել հօգուտ ժողովրդի և առհասարակ Ազգային ժողովի մի քանի տասնամյակների սղագրությունները աչքի անցկացնողը այնտեղ չի գտնի այնպիսի հարց, որը լուծված լինի գերազանցապես աշխատավոր ժողովրդի օգտին։

Այդ էր պատճառը, որ Ն. Ռուսինյանը սահմանադրության հռչակումից տաս տարի հետո հարկադրված էր իրավացիորեն արձանագրելու, որ Ազգային ժողովը և նրա ղեկավար օրգանները, պատրիարքարանը որևէ մնայուն և հանրօգուտ հարց չեն լուծել։

Ռուսինյանը իր այդ միտքը ձևակերպել է այսպես։

«Ո՞ր սահմանադրական պատրիարք ազգօգուտ նոր հիշատակ մը ձգած է, ո՞ր սահմանադրական վարչություն նոր բարեկարգություն մը հաստատած է։ Տաս տարի է սահմանադրություն ունինք, սահմանադրությունը գավառաց մեջ դեռ ի գործ չէ դրված և չենք իշխեր հարցնել, թե պոլսեցիք արդյոք ինչ շահեցան անոր տասնամյա գործածութենեն»։

Ռուսինյանը Ազգային ժողովի ամբիոնը օգտագործում էր նաև կուլտուրլուսավորական, կրթական գաղափարների տարածման համար, առաջարկում էր զարկ տալ դպրոցական ցանցի ընդարձակմանը, կրթական ընկերությունների գործունեության աշխուժացմանը, թատերական կյանքի վերելքին, տպագրության ցանցի լայնացմանը, զարկ տալ հատկապես այդ բոլորի բանալին կազմող աշխարհաբար լեզվի զարգացմանը։

Նա խոսում էր բավականաչափ մաքուր աշխարհաբարով, ձգտում էր, որպեսզի որքան այդ հնարավոր է Ազգային ժողովի ամբիոնից արտասանվող ճառերը լինեն մշակված, հղկված, զերծ գրաբարից ու օտարաբանությունից, լինեն սեղմ ու կոկ, դիպուկ ու նպատակասլաց, ճշտվի յուրաքանչյուր բառի նշանակությունը և առհասարակ նախապատվություն տրվի գրավոր ելույթներին։

* * *

Նահապետ Ռուսինյանի լուսավորական հայացքները ոչ այնքան դրսևորված են նրա դեպուտատական ելույթներում, կամ Ազգային ժողովի գործունեության ընթացքում, որքան նրա առանձին հոդվածներում գիտական պոլեմիկական բրոշյուրներում և գրքերում։

Մի առ մի քննարկել այն բոլոր հարցերը, որոնք կազմել են Ռուսինյանի հրապարակախոսության հիմքը, մեզ շատ հեռու կտանի։ Մենք Ռուսինյանի հրապարակախոսական գործունեության հիմնական գծերին կծանոթանանք և քննության կառնենք հատկապես այն մի քանի էական խնդիրները, որոնք եղել են Ռուսինյանի հրապարակախոսության հիմքը։

Ռուսինյանը, Գր. Օտյանը և մյուսները նույն դիրքերից էին առաջ քաշում կուլտուր դաստիարակչական աշխատանքի անհրաժեշտությունը և նույն դեղատոմսերն էին առաջարկում ժողովրդի լուսավորության համար։ Հայ բուրժուազիայի տնտեսական և քաղաքական շահերը պահանջում էին, որ տգիտու-

թյան ու հետամնացության միջից դուրս գա ժողովուրդը և լուսավորվի. գիտությունը, լուսավորությունը, կուլտուրան թափանցեն քաղաքները, զարգանա առևտուրը, հայ վաճառականը կարողանա մրցել օտար վաճառականի հետ. այդ կուլտուրան թափանցի նաև գավառ։ Այս բոլորը անհնար էր կատարել առանց հասարակաց համար ընդհանուր մի լեզվի ստեղծման, որի մասին խոսում էր Նիկողոս Զորայանը դեռևս 1847—48 թվականներին։

Այս պահանջի տեսական հիմնավորումով է, որ 1851 թ. հանդես է գալիս Հր. Օտյանը իր «Առաջարկություն աշխարհաբար լեզվի վրա» գրքույկով։ Նա առաջ է քաշում հասարակական լայն խավերի կողմից հասկանալի մի գրական լեզվի զարկ տալու անհրաժեշտությունը, գտնում է, որ գրաբարը շատ հարուստ է, գեղեցիկ, սակայն այն անհասկանալի է ժողովրդի մեծամասնության համար, ուստի պետք է համաժողովրդական լեզու դարձնել աշխարհարարը, այն մշակել, հղկել։

Գրական լեզվի զարգացման համար առաջարկելով հանդերձ միանգամայն ճիշտ ուղի, Օտյանը սխալվում էր, երբ այդ համաժողովրդական լեզվի համար որպես հիմք առաջարկում էր Կ. Պոլսի բարբառը, որը զարգանալով մայր հայրենիքից շատ հեռու, գտնվում էր թուրքերենի ուժեղ ազդեցության տակ, աստիճանաբար կորցնում էր իր կենսունակությունը։

Նույն սկզբունքների պաշտպանությամբ, հախուռն ու համարձակ 1853 թ. դրապայքարի մեջ նետվեց Նահապետ Ռուսինյանը իր «Ուղղախոսություն» գրքույկով։

Ռուսինյանի գիրքը բաղկացած էր երկու մասից՝ ընդարձակ առաջաբանից և քերականությունից։ «Ուղղախոսության» առաջաբանը իր հարցադրումներով, գիտական փաստարկումներով կանգնում է ժամանակի հայ իրականության համար ամենաառաջադիմական աստիճանի վրա։ Հեղինակը այնտեղ՝ հերքելով լեզուների առաջացման բիբլիական առասպելը, միանգամայն գիտական բացատրություն է տալիս լեզուների առաջացմանն ու զարգացմանը, այն կապելով տնտեսական կյանքի հետ կապված գործոնների հետ։

Ընդունելով գրաբար լեզվի մի շարք առավելությունները՝ նրա գեղեցկությունը, հարստությունը, այն համարելով հանդերձ «վսեմ» լեզու, Ռուսինյանը գտնում էր, որ այժմ միևնույնն է, այդ լեզուն այնքան է հեռացել ժողովրդից, որ ինքը չի էլ համարձակվում համարել լեզու, քանի որ նա այլևս չի կատարում լեզվի ֆունկցիա, միայն որպես զարդ է գործածվում, մինչդեռ հայ ժողովրդի հասարակական կյանքը անհրաժեշտություն է ներկայացնում ոչ թե զարդի, այլ պրակտիկ նշանակություն ունեցող մի լեզվի ստեղծումը, որը նրան հնարավորություն տա մտավորական բարձր աստիճանի հասնելու։ Ունի՞ դրա համար հայ ժողովուրդը հնարավորություններ։ Անշո՛ւշտ։ «Ազգն իր հին կորուսած լեզվին տեղ ունի այսօր, թե ոչ կատարյալ, գեթ բավական գործածելի արդի լեզու մը, ազգային, զոր շատ մարդիկ իրարմե քիչ տարբերությամբ կը դրեն, ու հասարակությունը քանի կերթա վարժ ու անուշ կերպով կը խոսի»։ Լեզվի հասարակական դերը միանգամայն ճիշտ ըմբռնող Ն. Ռուսինյանը, սակայն բռնում էր միանգամայն հակադիտական ուղի՝ լեզվի համար քերականություն առաջարկելով իր կողմից մշակված, ժողովրդի խոսած լեզվի կանոնները անտեսող, մի նոր և տարօրինակ քերականություն, որը կազմում է նրա «Ուղղախոսության» հիմնական մասը։ Քմահաճ այդ քերականությունը

մեծ աղմուկ հանեց Կ. Պոլսում և ենթարկվեց խիստ քննադատության։ Հետագայում Հ. Պարոնյանը, անդրադառնալով Ռուսինյանի նորամուծություններին, նրան նմանեցնում էր այն դերձակին, որը փոխանակ զգեստը հարմարեցնելու մարդու մարմնին, մարմինն է ուզում հարմարեցնել իր կարած զգեստին[1]։

Ռուսինյանի նորամուծ լեզուն անհաջողության մատնվեց։ Դրա պատճառը ոչ թե պատրիարքարանի միջամտությունն էր կամ հակառակորդների կատաղի հարձակումները, այլ այդ առաջարկների հակագիտական էությունը։ Ռուսինյանի առաջարկած լեզուն, որ նա կոչում էր արմեներեն, գործածվեց հեղինակի կողմից, նրա «Ուղղախոսության», «Տարեցույցի», մի քանի բանաստեղծությունների և Վ. Հյուգոյի «Ռուի Բլաս» պիեսի թարգմանության մեջ։

Լեզվից հետո Ռուսինյանին մտահոգող մեծագույն հարցերից մեկը եղել է հայ թատրոնի զարգացման խնդիրը։ Նա մոտիկ մասնակցություն է ունեցել Կ. Պոլսում սկիզբ առած հայ թատրոնի գործունեությանը։

Ռուսինյանը բեմը համարել է մի այնպիսի ամբիոն, որտեղից խոսվում է հասարակական լայն զանգվածների հետ։ Ուստի, գտնում էր նա, որ պետք է օգտագործել այդ ներգործոն հնարավորությունը հասարակության դաստիարակության համար, այլ խոսքով բեմը դարձնել դպրոց, հանդիսատեսներին տալ այնպիսի ներկայացումներ, որոնք ունենան դաստիարակչական նշանակություն, կարողանան ազդել հանդիսատեսի վրա, հոռի, վատ բարքերի խարազանումով, ձաղկումով, հանրորեն օգտակար գաղափարների պրոպագանդայով օժանդակեն հասարակական կյանքի առաջընթացին։

Նա թատրոնի կոչումը բնութագրել է այսպես.

«Լուսավորյալ դարուս մեջ, ուր կապրինք, ժողովրդային կրթության աղդու և բյուրարեղուն միջոցն է թատրոնը, չափահասից դպրոց մը, ուր հրահանգը ծպտյալ է զվարճության ակնախտից քողին տակ։ Թատերաբեմին բարձրեն իբր քարավաղե մը հեշտ կարկաչմամբ կիջնի ցիր ու ցան գետահարկին վրա ալյակն իմաստից, որ կբերե բարոյական դաս, կենցաղօգուտ խրատ, գրական ու գեղարվեստական ճաշակ, ուստի անձնյուր հանդիսական կառնու իր մասն ու կտանի, կծավալե իր ընտանյաց ծոցը»։

Ռուսինյանը քաջալերում էր այն մարդկանց, որոնք արհամարհելով հասարակական կարծիքը, դեմ գնալով խավարամիտ մարդկանց ուժեղ դիմադրություններին, նվիրվում էին հայ բեմին։

Ռուսինյանը հայ բեմը համարում էր ոչ միայն բարքերի ուղղման, հասարակական կյանքի առաջընթացին նպաստող մի դպրոց, այլև այդ բոլորի առաջին նախապայմաններից մեկը հանդիսացող հայոց նոր լեզվի, աշխարհաբարի կազմավորմանը, հղկմանը նպաստող մի դպրոց։ Հայտնի է, որ Մաղաքյանի թատրոնի գործունեության ընթացքում (1873—74 թթ.) Ն. Ռուսինյանը խմբագրել, ոճարանել է թե ինքնուրույն և թե թարգմանական պիեսները։ Եվ նրա ամբողջ աշխատանքը ընթացել է այն ուղղությամբ, որ բեմական լեզուն էլ որքան հնարավոր է հղկվի, զտվի գրաբար արտահայտություններից, քերականությունից։ Ռուսինյանի այս աշխատանքը մեծապես քաջալերվում էր աշ-

[1] Ն. Ռուսինյանի «Ուղղախոսության» վրա երկար կանգ չենք առնում այստեղ. այդ մասին ավելի ընդարձակ խոսել ենք մեր «Գայքարը արևմտահայերի մոտ, հանուն աշխարհաբարի» հոդվածում (տես Ն. Յա. Մառի կաբինետի ժող., գիրք 3, Երևան, 1948)։

խարհաբարի կողմնակից Հ. Պալյանի կողմից, որը իր նյութական հարուստ միջոցները չէր խնայում նրա առաջարկների կենսագործման համար։

Ինչպես իր «Ուղղախոսության» մեջ, այնպես էլ պիեսների տեքստերում Ռուսինյանը կատարում էր այնպիսի ուղղումներ, որոնք բեմից խորթ էին հնչվում, նույնիսկ ծաղրվում էին մամուլում։ Օրինակ Հ. Պարոնյանը գրում էր. «Վարագույրը կը վերնա, մեյ մալ ինչ կը տեսնես, հորեղբայրը հորար կըլլա, մորեղբորորդիները մորդի կըլլա, պիտիներուն ամենն ալ տի կըլլա, հանդիսականք ալ կը պոռան թե, այս բառերուն մեկնությունն մեղ ով պիտի տա։ Ով տի տա նէ, ան տի տա, ով որ կտրեր է նէ ան տի տա, Մեղու չըտի տա յա։

Ջանոնք կտրողը բստ իմ կարծյաց կամ վիրարուժ ըլլալու է կամ բժիշկ»։

Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ մասնակի անհաջող ու քմահաճ ուղղումների կողքին Ռուսինյանը կատարում էր բազմաթիվ այնպիսի խմբագրումներ, շտկումներ, որոնք միանգամայն օգտակար էին, նպաստում էին աշխարհարարի հղկմանն ու զտմանը, որոնք արդարև ստեղծում էին աշխարհարար բեմական լեզու։

Ն. Ռուսինյանի հայացքների մեջ յուրահատուկ տեղ է բռնում գավառի լուսավորությունը, մի բան որ բացակայում է ոչ միայն նրա գաղափարակից Գր. Օտյանի և մյուսների մոտ, այլև իրենից առաջ ասպարեզ իջած կամ իրեն ժամանակակից գրողների ու հասարակական գործիչների մոտ (Արմենակ Հայկունի, Հովհ. Հիսարյան և ուրիշներ)։

Ռուսինյանը այն կարծիքին էր, որ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը ապրում է գավառում, հեռու կրթությունից ու լուսավորությունից, և որ լուսավորել հայ ժողովուրդը, դաստիարակել նրան չի նշանակում միայն Պոլսում դպրոցներ բանալ և մի քանի հազար մարդու լուսավորել։

Դեռևս ժամանակը եկած չհամարելով հանդերձ գավառներում դպրոցական լայն ցանց ստեղծելու, գավառային բոլոր քաղաքներում ու գյուղաքաղաքներում դպրոցներ բաց անելու, այնուամենայնիվ նա գտնում էր, որ անհրաժեշտ է, որ գոնե տարրական դպրոցներով որոշ դաստիարակություն տալ գավառի հայ երիտասարդությանը և չափահաս տղամարդկանց։ Ռուսինյանը ցավով էր նշում, որ Ազգային ժողովի համար դեպուտատ ընտրող գավառացիների ճնշող մեծամասնությունը չգիտի իր ցանկացած թեկնածուի անունը թղթի վրա գրել և գցել քվեատուփը։

Մայրաքաղաքի վերաբերյալ նա այլ պահանջ էր ներկայացնում։ Այն կարծիքին էր, որ մայրաքաղաքումն էլ պետք է ընդհանուր հանրակրթական դպրոցների կողքին լինեն մասնագիտական դպրոցներ, որոնք կադրեր պատրաստեն և գավառի լուսավորության և մանավանդ գյուղատնտեսության համար։

«Ինչու ազգը քանի մը հողագործական դպրոցներ ու քանի մը արվեստանոցներ չունի»,— ասում էր նա։

Ռուսինյանը ժողովրդի դաստիարակությունը չէր պատկերացնում միայն արական սեռի դաստիարակությամբ։ Նա այն կարծիքին էր, որ ընտանիքը հասարակության առաջին բջիջն է, որը հնարավորություն ունի կրթելու, դաստիարակելու հասարակության համար օգտակար անհատներ։ Եթե տգետ է մայրը, չի կարող գնահատել որդու ուսման արժանիքը, չի կարող օժանդակել նրան։ Ինչպես 19-րդ դարի կեսերի մյուս բուրժուական մտածողները, Ռուսինյանն էլ անշուշտ չէր հասնում այն բանին, որ կինը ակտիվ կերպով մասնակ-

ցի հասարակական կյանքին, նրա մոտ էլ իգական սեռի դաստիարակությունը գերազանցապես խարսխված էր երեխայի դաստիարակության անհրաժեշտության վրա։ Այդ պահանջը նկատի ուներ նա, երբ գրում էր. «Ինչու մեր դուստրները վարժոցներու մեջ չկրթվին»։ Իսկ մի այլ տեղ շատ ավելի որոշակի գրում էր.

«Մինչև որ աղջիկներու կրթությունը ընդհանուր ընելով, ընտանիքներու կիրթ մայրեր չտրվին, ազգե մը կատարյալ կրթություն չի հուսացվիր»։

Այլ խոսքով Ռուսինյանը պահանջում էր, որ երկու սեռերը «համաքայլ ընթանան», «հաստատ համոզված ըլլալով, թե քանի որ կիները չը կրթվին. այրերու կատարյալ կրթության վրա հույս տածելը ինքզինքը պատրել է»։

* * *

Ն. Ռուսինյանի գեղարվեստական ստեղծագործությունների թիվը մեծ չէ. Ընդամենը մի տասնյակ ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններ տարեցույցներում տպված մի քանի արձակ էջեր և նրա դեպուտատական ճառերից մի քանիսը, որոնք իսկապես ներկայացնում են գրական արժեք։

Սխալ է այն տեսակետը, թե Ռուսինյանի գլուխգործոց բոլոր ոտանավորները թարգմանություններ են կամ փոխադրություններ։

Ռուսինյանը իր պոեզիայի նույնիսկ թարգմանական էջերում այնքան ինքնատիպ է, որ անիմաստ է որոնել ու գտնել նրանց՝ թույլ, շատ երկրորդական հեղինակների կողմից գրված նախատիպերը։ Այդպիսին է, օրինակ, Ռուսինյանի բանաստեղծություններից «Փառատենչ անուրջը»։ Այս բանաստեղծությունը նույնպես համարվում է փոխադրություն ինչ որ երկրորդական գրողի Ժոզեֆին Սուլարիից։ Սակայն բանաստեղծությունը այնքան հարազատ է հնչում հայ ընթերցողին, որ դժվար է այն թարգմանական համարել։

Ահա այդ ոտանավորի առաջին մի քանի տողերը.

Մին եզվար հող ունենայի՝ դյուր ըլլար, դար կամ թե ծործոր
Վազուկ ջրով՝ թեև քչիկ, վտակ ըլլար, ակ կամ հեղեղ,
Մեջը մին ծառ կը տնկեի՝ ծիրանի, ծոր կամ թե խնձոր,
Մեջը մին հյուղ կը շինեի՝ աղյուս, եղեգ և կամ բաղեղ,
Ծառիս վերև մին սիրուն բույն՝ բրդե, փետրե կամ սիզահյուս,
Հանգիստ կուտար մին երգեցիկ՝ ճահրիկ, ճնճղուկ կամ ծիծառնիկ,
Հյուղիս ներսեվ հեշտ ընկողնիկ՝ առկախ օրրան կամ պրտուահյուս,
Հանգիստ կուտար մին մանկուհվոյ, թուխ, կասկահեր կամ խարտեշիկ։

Իսկ ո՞րն է այս բանաստեղծության գաղափարական բովանդակությունը։ Հոգնություն կյանքից, բուրժուական քաղաքի ժխորից ու մրցավազքից, փախուստ դեպի բնության ծոցը, մենությունը, ամայությունը։ Սրանք թվում է, թե անհարիր գաղափարներ են այնպիսի մի հասարակական ակտիվ գործիչի համար, ինչպիսին էր պայքարող Նահապետ Ռուսինյանը։ Բանն այն է, որ Ռուսինյանը սահմանադրական խանդավառությունների մի քանի տարիներից հետո իսկապես որ ապրեց խոր հիասթափություն և՛ հասարակական կյանքից և՛ հենց իր ծրագրած սահմանադրությունից։ Այդ սահմանադրության արդեն յացառապես հարուստ դասակարգին ծառայելը, նրա ղեկավարների նույնիսկ իր սիրելի Սերվիչենի, Օտյանի, Աղաթոնի և մյուսների հաշտվողական դիրքը դեպի պատրիարքարանն ու պահպանողական խավերը, գաղափարական պայ-

բարի սրման զուգընթաց, այսպես կոչված, լուսավորյալների ազդեցության թուլացումը ազգային իշխանություններում, որոնց վրա մեծ հույսեր էր դրել Ռուսինյանը, այս բոլորը հուսալքել էին նրան ավելի շուտ՝ քան գուցե հնարավոր էր ենթադրել։ Որ սահմանադրական խանդավառությունից 6—7 տարի հետո Ռուսինյանը ապրում էր հուսալքում, այդ երևում է 1866 թվականի Գր. Ոտյանին նրա գրած մի նամակից։ Այնտեղ Ռուսինյանը գրում է.

«Ուր են այն օրերը, որք գիշեր կըլլային, և այն գիշերները, որ աիվ կըլլային և դեռ մեր խոսքերը չէին սպառեր և դեռ մեր սրտերը չէին հագենար։ ...Ինչպես չըլլամ առանցնամոլ։ Շատ են մարդիկ, լայն է աշխարհս, մարդիկ աշխարհ, երկինք, տաղտուկ են աչքիս, չգիտեմ ինչ է՝ ուզածս, սա կզգամ, որ Հոգվույս նեղ կը թվի իր չնչին ծրարը և զանի պատռել կը փութա. բան մը չեմ ուեսներ, որ զիս զբոսնե, բան մը որ դիս աշխարհիս հարե, չիք մոտս բարեկամ մը, որուն սիրտ բանամ...։ Դու կը հառաչես բարեկամ, հես կը հեծեծամ, դրե միշտ ինձի, կրկնե հաճախ հառաչանքդ»։

Ռուսինյանի այս տողերը լավագույն թարգմանն են նրա այդ շրջանի մըտորումների և բոլորովին էլ պատահական տրամադրություններ չեն, որ գրվեն առնվել ու հասցեագրվել Գր. Օտյանին։ 60-ական թվականների կեսերից սկիզբ առած ռեակցիայի աշխուժացումը, որը քաջալերանք էր գտնում օսմանյան կառավարության կողմից, հիասթափել, հուսալքել էր ոչ միայն «Մեղվի» շուրջ համախմբված դեմոկրատական խավերին, այլև բուրժուազիայի արմատական թևին պատկանող այն մտավորականներին, որոնք դեռևս ցանկանում էին հավատարիմ մնալ իրենց առաջադիմական գաղափարներին, դժվարությամբ էին տեղի տալիս ռեակցիոն լագերին։ Դրանցից էր Ռուսինյանը։

1858—60 թթ. ազատության դռները մի պահ բաց տեսնող Ռուսինյանին այժմ այդ ազատությունը ներկայանում էր որպես բանտարկված մի թռչուն ու ինչքան էլ այն փայփայվում էր, խնամվում, գուրգուրանքի արժանանում որոշ մարդկանց կողմից, բայց կալանավոր այդ թռչունը լռել էր, չէր հնչում նրա ազատատենչ դայլայլիկը։ Այս գաղափարն է ընկած Ռուսինյանի ինքնուրույն մի բանաստեղծության՝ «Մանուկ և արտուտիկի» հիմքում։ Փոքրիկ այդ ոտանավորը այսօր էլ հաճույքով կարող է ընթերցվել ու հուզել մարդկանց։ Ո՞րն է այդ բանաստեղծության սյուժեն. ժողովրդական այն քանչելի առածը, թե սոխակին դրել են ոսկյա վանդակի մեջ, բայց նա էլի լռել է ու ձգտել ազատության։ Ռուսինյանի ոտանավորի մեջ էլ նույն միտքն է, մանկիկը մեծ դժվարությամբ բռնել է ու գեղեցիկ վանդակի մեջ դրել արտուտիկին, որը չի երգում, չի ճվողում. լուռ է ու թախծոտ։ Մանուկը ասում է.

Մի դողար ի տես վանդակիս անել
Ծաղկոք եմ պատած ես անոր թելեր,
Դու քեզ մարգերու կրնաս մեջ կարծել.
Երգե ինձի հետ թռչնիկ սիրավետ։

Ոչ այս խոստումը, ոչ մանկան այլ թախանձանքները չեն կարողանում փոխել թռչունի համառությունը։ Մանուկը շարունակում է.

«Ահ, գուցե ես քու ձայնիկ չեմ լսած,
Թող ես փորձ փորձեմ, օն երգե և դու.

Կամ ոհ, գուցե ես քու անուն չեմ լսած,
Թող ես փորձ փորձեմ, օն երգե և դու.

Էլի լռում է թռչնիկը, ու այս բոլորից հետո է, որ մանկիկը հուսահատ ղգում է, որ գերությունն է լռեցրել թռչունին, որ անսահման եթերը նորից ձայն կտա նրան, և թողնում է թռչունին ասելով.

Զի անտառներու տեսնել պետք ունիս,
Որ զազատություն երգես անդորրիկ։

Ռուսինյանի այս բանաստեղծությունը, որի հիմքում ընկած է ազատության գաղափարը, գեղեցիկ է, գրված լիրիկական տաք շնչով, ջերմ է ու անմիջական, բայց միաժամանակ այնտեղ չկա այդ ազատությանն հասնելու որևէ միջոցի առաջադրում։ Կարծեք հեղինակը միայն ողբում է բանտարկված ազատության համար, նրա մոտ կա բաղձանք, մեղմ ու քնքուշ երազանք։

Այդ մեղմ, քնքուշ երազանքն է կազմում նաև Ռուսինյանի գլուխգործոց «Կիլիկիա» ոտանավորի բովանդակությունը։

«Կիլիկիան» մոտ մեկ դար է, որ երգվել է հայ ժողովրդի կողմից ու հասել մինչև մեր օրերը և այժմ էլ հաճույքով կատարվում է արտիստների կողմից։ Ո՞րն է դրա գաղտնիքը։ Այն, որ այդ ոտանավորը նախ գրված է բարձր արվեստով, հուզականությամբ և միաժամանակ արտահայտում է ազնիվ ու վեհ մի գաղափար, հայրենասիրություն։ Հայրենիքի սերն է ընկած ոտանավորի հիմքում, կորած, օտարի գերի հայրենիքի ազատագրության բարձր գաղափարը։

Ինչպես ասվեց՝ այդ ոտանավորը գրված է որոշակի տպավորությունների տակ և արձագանքում է շատ որոշակի քաղաքական պահանջների։ Գրված է այն օրերին, երբ Զեյթունում բռնկված ապստամբությունը իր վրա էր հրավիրել ամբողջ աշխարհի ուշադրությունը, իսկ հայ բուրժուազիան Կիլիկյան կորած անկախության վերականգնումն էր ցանկանում տեսնել այդ շարժման հետ կապված։ Ռուսինյանը նույն այն մարդկանցից էր, որոնք շատ մեծ ակնկալություններ ունեին Զեյթունի ապստամբությունից։ Ռուսինյանին, Պեշիկթաշլյանին, նույնիսկ Սմբատ Շահազիզին և շատ ուրիշներին, այդ շարժումը թվում էր դարավոր ստրկության մեջ տառապող հայ ժողովրդի ազատությունը ավետող առաջին ղողանջներից մեկը։ Իսկ Կիլիկիայի անկախության վերականգնումը այդ շարժման հետ կապելը հայ բուրժուազիայի իղձն էր։

Ռուսինյանը նույնպես կանգնած էր այդ տեսակետի վրա։ Գուցե դրա համար էլ նրա մոտ Կիլիկիայի այդ ազատագրումը չի կոնկրետացված, իր որոշակի արտահայտությունը չի գտել։ Միայն բաղձանք, ցանկություն է դարձել Կիլիկիան։ Գեղեցիկ այդ ոտանավորը մենք բերում ենք ամբողջությամբ.

Երբոր բացվին դռներն հուսո,
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Զքնաղ երկին մերս Արմենիո,
Երբ փայլե յուր քաղցրիկ օդեր։

Երբոր ծիծառն ի բույն դառնա,
Երբոր ծառերն հագնին տերև,

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա։
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

Տեսի դաշտերն Սուրիո,
Լեառն Լիբանան և յուր մայրեր,
Տեսի զերկիրն Իտալիո,
Վենետիկ և յուր կոնտոլներ։

Կղզի նման չիք մեր Կիպրա,
Եվ ոչ մեկ վայր է արդարև,
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արև։

Հասակ մր կա մեր կենաց մեջ,
Ուր ամենայն իղձ կավարտվի,
Հասակ մր ուր հոգին ի տենչ,
Հիշատակաց յուր կարոտի։

Հորժամ քնարս իմ ցրտանա,
Սիրո տալով վերջին բարևս,
Երթամ ննջել յիմ Կիլիկիա
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

Հայրենի հողը օտար բոլոր շքեղություններից, գեղեցկություններից ու փարթամություններից բարձր դասելու այս գաղափարը, որ այնքան հաջող կերպով Ռուսինյանը տվել է «Կիլիկիա» ոտանավորում, հայտնի է, որ նույն այդ թվականներին միանգամայն այլ արտահայտություն էր գտնում կրոնապահպանողական, ազգայնական դրամատուրգիայում և պոեզիայում։ Աշխարհի գեղեցկությունը, սքանչելիքը Սրապիոն Հեքիմյանը, Թ. Թերզյանը և ուրիշներ տեսնում էին ոչ թե Կիլիկիայում, այլ բիբլիական Հայաստանում, այն վայրերում, որտեղ առասպելական դրախտն էր եղել։ Ուշագրավ է, որ շատ ավելի պրակտիկ նպատակներ հետապնդող հայ բուրժուազիայի որոշ թևը հրաժարվում էր այդ միրաժից ու կանգ էր առնում զարգացման անհամեմատ ավելի մեծ հեռանկարներ ունեցող, նավահանգստներով ապահովված այդ երկրամասի վրա, ծովային հարաբերությունների հնարավորություններ ունեցող կիլիկյան Հայաստանի վրա։ Ռուսինյանը դրանցից էր։

Ն. Ռուսինյանը հայ հասարակական կյանքում կատարել է պրոգրեսիվ նկատելի դեր, որն արժանի է առավել հանդամանալից ու բաղմակողմանի ուսումնասիրության։